

# Էջեր ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՒՄՈՒԹԻՒՆԻՑ

Հայ ժողովրդական բանահիւսութիւնն հարուստ է, ճոխ, բազմազան եւ լայնածաւալ: Այդ հանգամանքը պիտի բացարձել նրանով, որ ինքը՝ ժողովրդոն, անսպառ աղքիւր է ստեղծագործութեան: Մտէ՛ք ժողովրդի հասարակ խաւի մէջ, կարգացէ՛ք նրա սիրուն ու հոգին եւ դուք այնտեղ պիտի դանէք ժողովրդական բանաստեղծութեան թանկացին գոհարներ: Պիտի տեսնէք ո՛չ միայն բնութեան, գութանի, սիրոյ, պարի երգեր, այլև հարսանեկան, պանդըլստութեան, երգիծական, սգի, աշխատանքի եւ այլ տեսակ նիւթեր, որոնցից շատերը վարպետ վրձինով նկարուած ստեղծագործութիւններ են եւ ցայտուն գոյներով պատկերում են Հայ ժողովրդի մտաւոր կեանքը, նրա վեհ ճպառմեններն ու խտէալները, զգացմունքներն ու հոգեկան ապրումները: Այստեղ կարդում ենք նաեւ նրա ուրախութիւնը, վիշտն ու ցաւերը: Այդ երգերն ուշագրաւ են իրենց կառուցուածքի պարզութեամբ, զգացմունքի անկեղծութեամբ եւ պատկերաւորութեամբ, գծեր, որոնք զբանելորում են ժողովրդի վրձինի կամ ժամանակի անյայտ տաղարանների երգերի բնորոշ եւ էական առանձնայատկութիւնները, միաժամանակ պարզ գաղափար են տալիս նրանց բանաստեղծական խոչոր ձիքեր, արուեստի էութեան ու գեղարուեստական ճաշակի մասին:

Այդ երգերից շատերը, դժբախտարար, իրենց ժամանակին դրի չեն առնելել եւ շատ թանկագին ստեղծագործութիւններ մատացուել են: Սակայն կան բազմաթիւ գողոտրիկ երգեր, որոնք գտնում են զանազան ձեռագիր երգարաններում ու տաղարաններում եւ իրենց բովանդակութեամբ, կառուցուածքի անկեղծութիւնների մասնակի առաջարար առաջին անդամ է, որը գրի առել: Բայց այսքանը պարզ է, որ դրանք իրենց կառուցողական արուեստով եւ ոճական երանգաւորումներով, մեծ մասմբ տաղարանների ստեղծագործութիւններ են, որոնք ժամանակի պայմաններում կրելով որոշ փոփոխութիւններ եւ նոր գունաւորմներ՝ ստացել են ժողովրդական ընոյթ:

Այս ժողովրդական բանահիւսութեան այդ անտիպ էջերից են այն, որ ձեռագիր երգարաններում կան որոշ երգեր, որոնք իրենց ինքնուրոյն եւ գեղարուեստական կառուցուածքով առաջնակարգ ստեղծագործութիւններ չեն, բայց ժամանակի ժողովրդի կամ տաղարանների քնարական ապրումների, խոների, ձգտումների եւ նրանց բանաստեղծական արուեստի ու ոճի հետ ծանօթանալու համար շատ կարեւոր նիւթեր են, արժանի յատուկ ուսումնասիրութեան:

Ի՞նչ երկոյթներ են ընդգծում, սակայն, 18րդ դարի Հայ տաղարանների կամ ժողովրդական ստեղծագործութեան այդ մեա-

տագրել ենք Սպահանի նոր Զուզա արուարձանում եւ Հնդկաստանի Կալկաթա քաղաքում գտնուած հին ձեռագիր երգարաններից, որոնցից վերջինը գրուած է թՄԻԱ (1221+551=1772) թուականին, ի կոստանդնուպոլիս, «Քրիսոյի կոչեցեալ երգարան» խորագով: Դա թոշնազարդ ու ծաղկազարդ կրօնական բովանդակութեամբ եւ 17 էջերից բաղկացած մի ժողովածոյ է, որը պարունակում է մեծ մասմբ գրաբար ստանաւորներ: Ուրոյն տեղ են գառաւում նաեւ աշխարհարար տաղերը, որոնք ժողովրդի կամ անյայտ տաղարանների կողմէց մշակուած եւ նոր գունաւորում ստացած երգեր են:

Թէ 18րդ դարում, 1772 թուականին, գրուած մեռազիր երգարանի ստանաւորները որքան հնութիւն ունեն եւ ովքի՛ր են նրանց ստեղծագործող իսկական հեղինակները՝ հաւասարի ապացոյցներ չունենք, որով չդիտենք, թէ ո՞ր երդն առաջին անգամ ո՞վ է զրի առել: Բայց այսքանը պարզ է, որ դրանք իրենց կառուցողական արուեստով եւ ոճական երանգաւորումներով, մեծ մասմբ տաղարանների ստեղծագործութիւններ են, որոնք ժամանակի պայմաններում կրելով որոշ փոփոխութիւններ եւ նոր գունաւորմներ՝ ստացել են ժողովրդական ընոյթ:

Այս ժողովրդական բանահիւսութեան այդ անտիպ էջերից են այն, որ ձեռագիր երգարաններում կան որոշ երգեր, որոնք իրենց ինքնուրոյն եւ գեղարուեստական կառուցուածքով առաջնակարգ ստեղծագործութիւններ չեն, բայց ժամանակի ժողովրդի կամ տաղարանների քնարական ապրումների, խոների, ձգտումների եւ նրանց բանաստեղծական արուեստի ու ոճի հետ ծանօթանալու համար շատ կարեւոր նիւթեր են, արժանի յատուկ ուսումնասիրութեան:

Դայն արկածութիւններ են ընդգծում, սակայն, 18րդ դարի Հայ տաղարանների կամ ժողովրդական ստեղծագործութեան այդ մեա-

ցորդները։ Այստեղ չեն հնչում ո՞չ ժամանակի պատմական անցքերին նուիրուած, ո՞չ էլ պատմաշրջանի հասարակական կեանքի բնորոշ երեւոյթները պատկերող հիմնական նիւթեր։ Դրանք գլխաւորապէս քընարական երգեր են, ներտաշնակուած բընութեան գունագեղ նկարների հետ։ Բայց դա պատահական մի երեսոյթ չէ։ Բնութեան չքնաղ, հիառքանչ պատկերները, իրենց քաղմազան երանդներով, խօսել են ժողովրդի ու ժամանակի տաղերգուների սրտի հետ եւ զանազան խոհեր ու զգացումները յարուցել նրանց հոգիների մէջ։ Եւ ահա երգ ու տաղի սիրահար ժողովուրդն ու տաղերգուներն ստեղծագործութեան նիւթեն զարձել իրենց անմիջական, հարազատ եւ անկեղծ ապրումներն ու տպաւորութիւնները։ Նրանք մերթ երգել են զարնան նաշխուն հաւքերին, գոյնզույն ծաղիներին, երգել են կանանչազարդ դաշտերին ու սարերին, մերթ վրձինի պէս-պէս գոյներով նկարել են մարզագետիները, արմաւենիներով, սօսիներով եւ եղենիներով ծածկըւած ձորերը։ Արտաքին գծագրութեամբ անպաճոյն, բայց ներքին բովանդակութեամբ նկարչական այդ տաղերը<sup>1</sup>, որոնք յօրինուած են ժողովրդական արուեստով, զիաւորապէս անհատական ստեղծագործութեան զանձեր են եւ արժանի լուրջ ուշագրութեան։ Դրանցից այստեղ առաջ բերենք մի պատկեր։

Այդ լեռներու գէմ յանդիման դաշտերուն, նայէ զափիլք, զափիլք առերաւն, Արմաւեննաց, եղեննաց, սօսիներուն, նաշխուն բռչում ա'յն քարքիկ սարերուն ի վեր ու ի վայր կ'օստաստին ձորերուն։ Նաշխուն բռչում ի մէջ ծաղկանց ստաստին, ֆայնին երգեն սնուշ-տառուց տրտագին, նև մրգառաս մարզագետին լեռային, Նաղարաբախ պայշտառութեամբ փողփոխին։

Թէ ս'վ է այս ոտանապորի տաղարանը, յայտնի չէ։ Նրա անունը մնացել է այս տութեան մէջ։

Ժողովրդական բանահւառութեան գեղեցիկ էջերից մէկն է նաեւ «Զիւները Հաւշոն» խորագով տաղը, որ գրաւէ է իր

պարզութեամբ ու պատկերաւորութեամբ։ Դա բնութեան գունագեղ ծաղիկները, վըտակներն ու թոշունները, գառներն ու արօտները պատկերող նկարչական մի սիրուածարան է, ժողովրդական վրձինով նըկարուած։ Ահա այդ հնագոյն սիրուն հովուերգութեան պատկերը։

Զիւները հալան, դաշտերը ծաղկան, Վասկներ գուլալ ամսաւ ծայս կու տան։ Խայտան ու բերկրին խաշինք յարօւին, Մաղկունք փայլփին, բռչումք բարբահին եւ ուրախ կանչով մեր բփոց պահուին, Խոկ գառինք խայտան, ցնծութին մեզ տան։ Զիւները դարերէն, բարձր սարերէն Հալչին ու յօրդին, վլու-վլու կու հոսին։ Սարեկ ու լորիկ, կախու ու սոխակ Եւ սիրուն տատրակ կ'երգենք ամսւակ, Սարերն ի վեր բռչմ շարումակ, Խոկ գառինք խայտան, մեզ ցնծութին տան։

18րդ դարի ձեռագիր տեսրակի տաղերում բշխում է բնութեան մի այլ գեղեցիկ նկարը։ Դա «Պաղերն անցան» վերնագրով ոտանաւորն է, որի առանձնայատուկ գծերն են՝ ժողովրդական երանցը պարզութիւնն ու պատկերաւորութիւնը, որոնք գեղարտեստական փայլ են տալիս երգի կառուցղական արուեստին։ Ահա այդ երգի պատկերը։

Պաղերն անցան, ձիւները հալան, Գնաց ձևնը, զարուն է ալան։ Դրախտի նման այզիներ ծաղկան, Գոյնզզայն ծաղկաւմք դաշտերը լցան։ Տունկները վարդենյան կանաչ դալարին, Շաղերը ծաղկանց մէջը շաղաղին։ Թռչուններ ուրախ ամսաւ զեզեղին, Մասերի վրայ ձագեր կու հանին։

Ոտանաւորի գրական ոճը, լեզուն ընդգծում են մի հանգամանք, որ բանաստեղծական ձիրքով օժտուած մի անյայտ տաղարանի ստեղծագործութիւնն է կ կառուցուած ժողովրդական արօւեստով։ Առ ոճով։ Ձեռագիր մատեանի քնարերգութեան գողարիկ ստեղծագործութիւններից են սիրուերգութեան կամ Ահա գրանցից ժողովրդական

երանգով գրի առնուած բնութեան ու սիրային մի բանաստեղծութիւն։ Դա «Գառըունն է եկել» վերնադրով տաղն է, որի մէջ ցոլանում է անմժան բնութեան եւ սիրոյ, կարօտի ու զզացմունքի խորութիւնը։ Ու տանաւորն իր պարզութեամբ, գունագէղ երանցներով գրաւիչ է եւ իր հիմնական կառուցուածքով ներկայացնում է մի սիրուն պատկեր։ Այստեղ նըրին արուեստով նկարում են աղբւրների անուշ ու պաղուկ ջրբերը, լեռներն ու սարերը, ամպերն ու ծովերը, ցոլն ու անձեւը, հեղիկ հովերը, ծաղիկներն ու անուշաղոյր վարդերը և կանաչաղարդ ծառերը։ Ահա չքնաղ գարնան սիրուն տեսարանը—

Դարուն է եկել, ենիկ կարօտ մնացի,  
Այրիմ ու տափիմ, որդէս հուրը մնացի,  
Քեզի շատ օրեր, ես ծովէ ծով գեացի։

Անուշ ու պարաւի ջրերն են ապերաց,  
Փարզու բարձն, բերեմ ենի լիրաց,  
Ցանեն ու ցօնեմ վարդերուն էն բացուած։

Ամպերն ամէն էն ծովերէն դարձն են,  
Տօղ ու անձեւ ենիկ համար բարձն են,  
Անուշ ենվերն էն սարերէն դարձն են։

Գարունն է եկել, ծաղկումք ու վարդ կու բաց-  
ուին  
Նառերը բայր կամաչ տերեւ կու հազնին,  
Մնացի կարօտ բա անուշ լեզուին, շնմար բօյին։

Վազ ու խաղսվ, անուշ գիմով արքենամ,  
Այրիմ, կիզիմ, ոչ նըրէկ զուանամ,  
Միայն միայն բա սիրով եռվանամ։

<sup>5</sup> Թէ ո՞ր տաղասացի ստեղծագործութիւնն  
է, վարժնին, չէ, ի տաղի կառուցուածքը  
պարզում է մի հանգամանք, որ արտագը-  
րողի կողմից աղաւաղուած է։ Մի այլ ձեռ-  
ուագրից տարբեր որինակը թերեւո յայտ-  
նարերուի եւ հնարաւոր լինի վերականգնել  
տաղի հարազատութիւնը։

Միջնադարեան, Հայ բանաստեղծական  
գրականութեան մէջ ուրոյն տեղ են գրա-

ւում թուներզիրը, որոնք իրենց արտաքին կառուցուածքով պարզ են, անարտեստ, բայց ներքին բովանդակութեամբ հոգեբանական են, պատկերաւոր եւ յուզիչ։ Այդ երգերում պատկերանում են բնութեան զանազան հաւքերի բարեմասնութիւնները։ Սակայն դրանք պատահական ստեղծագործութիւններ չեն։ Հայ երգիչները գիտեն, որ կանաչ ու ծաղկազարդ դաշտերի, գեղա-  
կերտ հովիտների ու ձորերի, ծառազարդ անտառների ու բարձր գիտեն սարերի այլ ան-  
ընթաց երգիչները՝ թռչուններն, իրենց գոյր-  
նըրդոյն, զառավատ ու խամ փետուրներով ասանձին երանդ ու դրաւչութիւնն են տալիս բնութեան գեղեցիկ անուարաններին և խո-  
րացնում են զեղարուեստական տպաւորութիւնը։ Գիտեն, որ նրանց թովիչ երգերն երաժշտական զիւթիչ եղանակներ են, ու-  
րունք հնչում են բնութեան գրկում, կապու-  
տակ երկնքի տակ, հնչում են գունագեղ ե-  
լեւէլիներով։ Այդ սիրուն ու նաշխուն հա-  
ւկիներից սովահկը, քնարիկը, կոռունկը, լո-  
րիկը, տատրակը, ծիծեռնակը, կաքաւ։  
Հայ ժողովրդի, տաղերգուների եւ բա-  
նաստեղծների ամէնից շատ սիրած թռչուն-  
ներն են, որոնց նուիրուած աղերի եւ եր-  
գերի պատկերները սեսնում ենք նաև «Ծ-  
մինեան Աղջագրական ժողովածոււում»,  
«Բիւրակնուում», «Բաղմակիպնուում», «Քնար Հայկական»-ում, Աղջագրական Հանդէսու-  
ում եւ այլ պարբերականներում ու երգա-  
րաններում։

Ցայտուն գաղափար տալու համար, մեր ձեռագիր տետրից այստեղ առաջ բերենք ժողովական քնարի լարերի վրայ հնչող հաւիկի երգը—

Հաւիկ մի տեսի պայծառ աննման,  
Բարձր քարափի վերաց աննման,  
Թառն է սիրունիկ, չկայ իր նման,  
Զայնի անուշիկ կանչէ սննման։  
Խաս փետուրթերը գոյն-գոյն աննման,  
Ալենքի շողուն մասն աննման։

Այ նաշխուն հասիկ,  
Այ իմ սիրունիկ,  
Դու ես մի հասիկ։

Զաշերք սիրուն, գոհաք աննման  
Առաւուն շաղ ցօնում է մասն,

Անօշիկ ձայնի կամչէ աննման,  
Այց զեղեցկագոյն հաւիկն աննման:  
Ելնեմ սարերը կամանչ աննման,  
Տեսնեմ նաշխանիկ հաւիկն աննման:

Այ սիրում հաւիկ,  
Այ իմ նաշխունիկ,  
Դու ես մի հաւիկ:

Սակայն, միջնադարեան ժողովրդական  
աժենասիրելի երգերի մէջ, «Կռունկ» գո-  
հար երգից յետոյ, առանձնայատուկ տեղ  
են զրաւում կաքաւին նուիրուած ստեղծա-  
գործութիւնները, որոնք հարուստ են զա-  
նազան տարբերակներով ու կրինակներով։  
Այդ «նաշխուն» ու քաղցր» թռչնիկն ժողո-  
վրդական տաղարանն երգել է այսպիսի  
գունեղ հնչիւններով—

Արի՛, արի՛, նաշխուն կամու,  
Սարեր ամէն կամանչացաւ,  
Անուշ գարբան ծաղկով ցնծա՛,  
Այդ լեռներէն ի վայր փուրքա՛,  
Դաշտեր ամէն կամանչացան:

Արագ-արագ սստուտելով,  
Մաղկանց մէջը բռւրգալով,  
Զայն արակին անուշ կամչով.  
Այդ լեռներէն ի վայր փուրքա՛,  
Դաշտեր ամէն կամանչացան:

Քաղցրածայն սիրում քոչում,  
ՋԱսուտած կ'օրինեն օրն ի բռւմ,  
Դու ես սուլբան այդ սարերում.  
Այդ լեռներէն ի վայր փուրքա՛,  
Դաշտեր ամէն կամանչացան:

Ուկնիքայլ խաս փետուր ութես,  
Մաղկանց մէջն անուշ կ'իրցես,  
Նաշխուն պունուշ ձագեր համես.  
Այդ լեռներէն ի վայր փուրքա՛,  
Դաշտեր ամէն կամանչացան:

Տոսիկներդ կարմիր զռմակ,  
Փետուրմներդ փայլում սուտակ,  
Զայնդ կուգայ խխաս անուշակ.  
Այդ լեռներէն ի վայր փուրքա՛,  
Դաշտեր ամէն կամանչացան:

Փառօք նեմես որպէս իշխան,

Լերիմք ի ենց յարկ սնփական,  
Գեղ երանեն քոչումն համայն.  
Այդ լեռներէն ի վայր փուրքա՛,  
Դաշտեր ամէն կամանչացան:

Վարդ ու շուշան սիրում ծաղկանց  
Եւ մամուշակ մօս ամտաւաց  
Բարձ-ամենովիմ մեզ գարդարած.  
Այդ լեռներէն ի վայր փուրքա՛,  
Դաշտեր ամէն կամանչացան:

Զեռագիր երգարանով այս տաղի ներ-  
քեւում կարդում ենք Պետրոս Ղափանցի.  
Ենք թուում է, որ տաղը 18րդ դարի բանաս-  
տեղծի յօրինած ոստանաւորի մի այլ օրի-  
նակն է. նրան ինքնուրբյն տաղի հարազա-  
տութիւնը վերականգնելու համար մի ար-  
ժէքաւոր աղբիւր է եւ իր բովանդակու-  
թեամբ ցայտուն զաղափար է տալիս տա-  
զարան-քանաստեղծի կառուցողական ար-  
ուեստի, լեզուի, ոճի և այլ է ական. առանձ-  
նայատկութիւնների մասին։

Նշենք եւ այն, որ մեզ աւանդ մնացած  
թռչներգերից թանկագին գոհարներ են սիր-  
ուուն կաքաւին նուիրուած տաղերն ու եր-  
գերը, որոնց մէջ պատուաւոր տեղ են զը-  
րաւում «Կաքաւն՝ ի քարին նստէր», «Անս-  
եալ կայր ու լայր կաքաւն», «Այ աննման  
կաքաւիկ», «Կաքաւ թռաւ բարձր սարչն»,  
որոնք երգուել են ժողովրդի շրթերի վրա։

Այնտեղ Հայ ժողովուրդը գրսեւորել է  
իր քնարական յոյզերը, իր խոհերն ու տը-  
րամադրութիւնները, իր Հոգեկան դասն  
ապրումներն ու զգացումները։

Այդպէս է կառուցուած Խարբերդի ժո-  
ղովրդական բարբառով կաքաւին նուիրուած  
ոստանաւորը, ուր փոխարերական մտքով  
զծուած է Հայ ժողովրդի ողբերգական  
կեանքի պատկերը՝ այնպէս յուղիչ եւ մե-  
լամազդու։ Ահա տաղի հիմնական բովան-  
դակութիւնը...

Կառուիկ նստեր վեր ժարին,

Օր կուլար արցումն էր արին։

— Եւս կախուիկ, քէ ասոր ուեր զայ, ուրք։

— Խնարդ չի լամ, որ ճամփեր են տարած,

Զագեր բռնմերէն տարած.

Իմ սիրոս են էրած.

Ոչ զիտեմ ավմիննը տարած.

Ոչ գիտեմ հարաւիմ եսվէ քշած:

- Սեւ կափուկի, գում ո՞ւր տի բախի:
- Բաներ խուալիմ վրայ կը բախի:
- Սեւ կափուկի, թէ տառը տէր գայ, ո՞ւր:
- Ուսիմ ու մորիմ վրայ՝ խարարա կ'բախի:
- Թէ ես էլ չ'բախե:
- Կէծ մը կրակ կ'ընիմ,
- Ես զիս կը վախիմ:

սարեր ու ձորեր հեռու գտնուող իբենց սիրասուն բալիկների կարսով։ Ահա ձեզ մի վշտահար մօր նկարը։ Նա դիմում է գաղթից վերադարձող հաւիկին, բաց անում իր կիրաւոր սիրտը եւ մայրական կարօտի վառ զգացումներով ու խոր թախիծով պատկերացնում է իր Հոգեկան ապրումները, իր սրտի անհուն վիշտը։

**Ժողովրդական տաղերգուն չի մոռացել**  
նաեւ բնութեան ամենատաղանդաւոր քնարերգակ երգչին ու ոռխակին, որի հետ պատկերել է նաեւ վարդերով զարդարուած թըմիերը եւ զոյնզայն ժաղկիները։ Երջն ամբողջովին տոգորուած է անկեղծ զզացմունքով եւ առանձին երանդ է տալիս նրա զեղարուեստական պատկերաւորութեանը։ Ենկել են գարնան անոյշ օրերը, զուգուել են գաշտերը, սարերը ծաղկել։ Ծալ-ծալ բացուել են նաեւ կարմիր-ճերմակ վարդերը, որոնց վրայ բիւրիւլը հնչեցնում է իր հմայիչ երաժշտութիւնը։ Ողջ ընութիւնը համակուել է նրա դիւրիչ երգով։ Ահա տաղերգուի քնարի հնչիւները։

Գարունն է եկել, վարդերը բացուել,  
Զուգուել են դաշտեր, սարերը ծաղկել.  
Կանչէ՛, բիւրիւլի՛կ, կամաչ գարուն է,  
Քաղցը ճայնիկդ ամուշ գեղգեղէ։

Կանչէ՛, բիւրիւլի՛կ, սիրուն գարուն է,  
Կարմիր վարդերը զուցի են բիւր.  
Կանչէ՛ բացցրի, բամի գարուն է,  
Բացուել են ներմակ, ամուշ խա վարդեր։

Կանչէ՛, բիւրիւլի՛կ, կամաչ գարուն է,  
Բացուել են վարդեր, գյուղօյն ժաղկիմեր.  
Կանչէ՛ բացցրիկ, բամի գարուն է,  
Քաղցը ճայնիկդ ամուշ գեղգեղէ։

**Ժողովուրդն երգի նիւթ է զարդել նաեւ**  
իր հոգեկան ծանր ապրումները, տնտեսական անմիտթար վիճակը։ Այստեղ նաև իր թշուառութիւնը, իր կիսաքաղց վիճակը ներդաշնակել է հաւիկի ճայնի հետ։ Գեղջուկունքները, կոււռ կեանքը սրտառութիւնն է կոււռ կեանքը սրտառուչ պատմութիւնն է դա, ուր բոլոր կարօտակէղ մայրերի կեանդը է պատկերանում, որոնք առաջնում են

նաշխան հաւիկի, ուսկէ՞ կուզաս,  
Եղպէս փոշոս սարէն կուզաս.  
Աստուած միքս խորար մը տաս,  
Խմ բայիկէն բդրիկ մը տաս։

Կայմէ՛, հաւիկի, սիրոս կուլայ,  
Բալիս նուեր մերկ են իիմա.  
Հաց ալ չումիթ, եղգիս կուլայ,  
Հաւիկի, բալէս ո՞ւր է իիմա։  
  
Կայմէ՛, հաւիկի, աչք բաց ա,  
Միմուս սրտէս արօն կուզայ.  
Խորար չումիթ իմ բայիկէն,  
Հաւիկի, ըսէ՛, ե՞րբ տուն կուզայ։

**Գծենք նաեւ օտար երկրում հիւանդապակած զարիբի ողբերգական կեանքի պատկերը։ Այսրոջ տասսը տարի է նա հեռացել է իր օջախից։ Տասսը տարի է չի տեսել իր հարազատներին ու ազիզ եարին։ Եւ նրանց կարօտը սրտին՝ թափառել է եկեղեց երկիր։ Այժմ՝ երբ մնացել է բոլորվին մենակ, անօդեական ու «մոլոր», կարօտակէղ սրտով յուռահասարացանշում է։ «Զմեւանէի, եարո տեսնէիք։ Գծենք ժողովրդական այդ գոհար տաղի պատկերը եւան։**

Դարիբը պատկի ա, անձար կոմքայ,  
Հեր ու մեր չի կայ, որ հոգոք հօգայ.  
Քարերը եօրդան են, Փողը դոշակէ,  
Բարձ ու բալիշ չումի նա իր զլոի տակ։

Մեր չումի, որ տեղը զցէ, կերցնէ,  
Քորիք չումի բարձի երեսը բարձնէ։

1 Անկողիմ։

2 Հողը։

3 Ներքնակ։

4 Քայր։

Խար էլ չումի, հալըց, խարըց հարցնէ,  
Ախոնք չումի՝ չուխայ կտրէ, հազգնէ:

Վա՞յ մօրք, որ զարդին բերել ա,  
Գշերը ծիծ ա սվել, ցերեկը բրօրել<sup>7</sup> ա.  
Ղարիբը երկրէ երկրի կորել ա,  
Խճին իրա նամքէն լափթ մոլորել ա:

Տասը տարի կայ հեռացել է, կորել,  
Օտար երկիրներ ա ընգել, կորել.  
Ընշանք<sup>8</sup> չմեռնէի եարս տեսնէի.  
Վարդ ու ռէհամի պէս մօսք բանէի:

Ահա ձեզ սիրող ու տանջուող երիտաս-  
սարդ կնոջ սրտից բխած, անկեղծ զգաց-  
մունքով լի մի փոքրիկ քնարական պատկեր  
եւս, ուր այնքան խոր վիշտ ու կարօս կայ—

Կրմէ՛կ ձեզի նաշխան հաւեմիր,  
Որ սավդայի! բան չէք տեսեր.  
Թէ որ տեսնէք սավդի մրժուա,  
Կը քափուի ձեր էկ խաս փետուք:  
Հաւեմ՛ք, մեղամից հարց անեմ.  
—Աշաք<sup>2</sup> զարիս<sup>3</sup> չէ՞ք տեսեր:

Ահա սրանք են ժողովրդական երանգա-  
ւորուովկ կառուցուած այն անտիպ էջերը,  
որոնք ազդիւր են զարձել երաժշտութեան,  
տարածուել են զանազան երգէչների կող-  
մից եւ երգուել ժողովրդի լրիների վրայ:  
Այդ երգերն իրենց պարզութեամբ, յստա-  
կութեամբ, գեղարուեստական պատկերա-  
ւորութեամբ, զգացմունքի խորութեամբ եւ  
այլ առանձնայատկութիւններով մի անգամ  
եւս դրսեւորում են ժողովրդական անյայտ  
երգասացների վարպետ վրձինի վեհութիւ-  
նը եւ նրանց բանաստեղծական նուրբ ճա-  
շակը:

5 Վիճակ:

6 Դրուքիւն:

7 Օրօրել:

8 Բոլորավիմ:

9 Այնքան ժամանակ, մինչեւ:

1 Սիրոյ:

2 Արդեօք:

3 Մրտով սիրած եար:

Անտիպ մի էջ ժողովրդական  
բանահիւսութիւնից

Տ է Ր Տ է Ր Ն ՈՒ Հ Ա Ր Ս Լ

—Ա՛յ պղոկիկ եարս, ա՛յ հարսնաւկ ջա՛ն,  
էդ ի՞նչ սիրում մագեր ունես.

—Ա՛յ տէրտէր ջա՛ն, ա՛յ տէրտէր ջա՛ն,  
ին ժեզ կուտամ, շուրջան էնես

—Ա՛յ պղոկիկ եարս, ա՛յ հարսնաւկ ջա՛ն,  
էդ ի՞նչ սիրում նակատ ունես.

—Ա՛յ տէրտէր ջա՛ն, ժեզ զուրբան,  
ին ժեզ կուտամ, սեղան էնես:

—Ա՛յ պղոկիկ եարս, ա՛յ հարսնաւկ ջա՛ն,  
էդ ի՞նչ սիրում աչքեր ունես.

—Ա՛յ տէրտէր ջա՛ն, հազոր զուրբան,  
ին ժեզ կուտամ, կամքեկ էնես:

—Ա՛յ պղոկիկ եարս, ա՛յ հարսնաւկ ջա՛ն,  
էդ ի՞նչ սիրում լեզու ունես.

—Ա՛յ տէրտէր ջա՛ն, ա՛յ ազիք ջա՛ն,  
ին ժեզ կուտամ, փուրվան էնես:

—Ա՛յ սիրում եարս, ա՛յ հարսնաւկ ջա՛ն,  
էդ ի՞նչ սիրում բերան ունես.

—Ա՛յ տէրտէր ջա՛ն, ա՛յ ժեզ զուրբան,  
ին էլ կուտամ սկիք էնես:

—Ա՛յ սիրում եարս, ա՛յ հարսնաւկ ջա՛ն,  
էդ ի՞նչ սիրում բեւեր ունես.

—Ա՛յ տէրտէր ջա՛ն, ա՛յ տէրտէր ջա՛ն,  
ին էլ կուտամ, կերոն էնես:

—Ա՛յ պղոկիկ եարս, ա՛յ հարսնաւկ ջա՛ն,  
էդ ի՞նչ սիրում լըշեր ունես.

—Ա՛յ տէրտէր ջա՛ն, զամիք զուրբան,  
ին էլ կուտամ, մամեր էնես:

—Ա՛յ սիրում եարս, ա՛յ հարսնաւկ ջա՛ն,  
էդ ի՞նչ սիրում բշշեր ունես.

—Ա՛յ տէրտէր ջա՛ն, ա՛յ տէրտէր ջա՛ն,  
ին էլ կուտամ, գրկալ էնես:

(Արամ Երեմեանի գրական արխիւսից)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ